ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Գործ №-ԼԴ/0116/01/14

Լոռու մարզի ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարանի դատավճիռը
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա. Մկոյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<28>> հոկտեմբերի 2014 թվականի ք. Երևան

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ /այսուհետ նաև՝
Վերաքննիչ դատարան/ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահող դատավոր՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
դատավորներ՝ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

քարտուղարությամբ՝ Ս. ՂՐՋՅԱՆԻ
մասնակցությամբ՝
պաշտպան՝ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ամբաստանյալ՝ Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում ամբաստանյալներ Մարտուն Վաչագանի Համբարձումյանի, Զարիկ Արամայիսի Գևորգյանի և իրենց պաշտպան Գուրգեն Հարությունյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա, վճռաբեկության կարգով քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Մարտուն Վաչագանի Համբարձումյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և Զարիկ Արամայիսի Գևորգյանի ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով,

Պ Ա Ր Զ Ե Տ

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի քննիչ՝ Ա. Մնացականյանի 2013թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ հարուցվել է թիվ 33106013 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, այն ընդունվել է վարույթ և կատարվել է նախաքննություն: /Տե՛ս քրեական գործի նյութեր հ.1 գ-թ 1/

2. 2013թ. դեկտեմբերի 24-ին թիվ 33106013 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 2 /երկու/ ամիս ժամանակով՝ մինչև 2014թ. մարտի 6-ը:/հ. 1 գ-թ 119-120/

3. Քննիչ Ա. Մնացականյանի 2014թ. փետրվարի 27-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործով Մարտուն Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:/հ. 2 գ-թ 1-2/

4. 2014թ. մարտի 3-ին թիվ 33106013 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 2 /երկու/ ամիս ժամանակով՝ մինչև 2014թ. մայիսի 6-ը: /հ. 2 գ-թ 10-11/

5. Քննիչ Ա. Մնացականյանի 2014թ. մարտի 6-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործով Մարտուն Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով: /հ. 2 գ-թ 13-14/

6. 2014թ. ապրիլի 30-ին թիվ 33106013 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 1 /մեկ/ ամիս ժամանակով՝ մինչև 2014թ. հունիսի 6-ը: /հ. 2 գ-թ 38-39/

7. Քննիչ Ա. Մնացականյանի 2014թ. մայիսի 27-ի զեկուցագրի համաձայն թիվ 33106013 քրեական գործի նախաքննությունը հանձնանարվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Հ. Մարգարյանին, որը նույն օրվա որոշմամբ սույն քրեական գործը ընդունել է վարույթ և շարունակել նախաքննությունը:/հ. 2 գ-թ 41-42/

8. 2014թ. հունիսի 3-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 2 /երկու/ ամիս ժամանակով՝ մինչև 2014թ. օգոստոսի 6-ը: /հ. 2 գ-թ 44-45/:

9. Ավագ քննիչ Հ. Մարգարյանի 2014թ. հուլիսի 16-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործով Մարտուն Համբարձումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով: /հ. 2 գ-թ 65/

10. Ավագ քննիչ Հ. Մարգարյանի 2014թ. հուլիսի 16-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործով Մարտուն Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով:/հ. 2 գ-թ 66/

11. Ավագ քննիչ Հ. Մարգարյանի 2014թ. հուլիսի 22-ի որոշմամբ թիվ 33106013 քրեական գործով Զարիկ Արամայիսի Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով: /հ. 2 գ-թ 73/

12. Ավագ քննիչ Հ. Մարգարյանի 2014թ. հուլիսի 22-ի որոշմամբ մեղադրյալ Զարիկ Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: /հ. 2 գ-թ 77/

13. 2014թ. օգոստոսի 1-ին թիվ 33106013 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու համար, որն Առաջին ատյանի դատարանում ստացվել է 2014թ. օգոստոսի 1-ին: /հ.2 գ-թ 97-109/

14. Առաջին ատյանի դատարանի 2014թ. օգոստոսի 4-ի որոշմամբ թիվ ԼԴ/0116/01/14 քրեական գործն ընդունվել է վարույթ, իսկ 2014թ. օգոստոսի 13-ի որոշմամբ այն նշանակվել է դատական քննության: /հ.2 գ-թ 110, 117/

15. Առաջին ատյանի դատարանի 2014թ. օգոստոսի 22-ի դատավճռով ամբաստանյալ Մարտուն Վաչագանի Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է տուգանքի ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի 400 /չորս հարյուր/-ապատիկի, 400.000 /չորս հարյուր հազար/ դրամի չափով, տեղական ինքնակառավարման կամ պետական մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելով 1/մեկ/ տարի ժամկետով:

Նրա նկատմամբ կիրառվել <<ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման /այսուհետ նաև՝ Համաներման ակտ/ 1-ին կետի 2-րդ ենթակետը և նա ազատվել է հիմնական պատժի կրումից:

Մարտուն Վաչագանի Համբարձումյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնվել է անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Զարիկ Արամայիսի Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է տուգանքի ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի՝ 300 /երեք հարյուր/-ապատիկի՝ 300.000 /երեքհարյուր հազար / դրամի չափով, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հաշվապահական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելով 1 /մեկ/ տարի ժամկետով:

Նրա նկատմամբ կիրառվել է ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներման որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և նա ազատվել է հիմնական պատժի կրումից:

Զարիկ Արամայիսի Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնվել է անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Իրեղեն ապացույցներ ճանաչված՝ 2012 թվականի նոյեմբերի 24-ի ակտը, ապացույց ճանաչված, Անտառամուտի գյուղապետարանի և ԱՁ <<Դունախանում Ղուբաթյան>>-ի միջև 2012 թվականի հուլիսի 10-ին կնքված թիվ 1 պայմանագիրը, դրա հիման վրա կազմված թիվ 65 հաշիվ ապրանքագրի 2-րդ օրինակը, պահանջվող վճարումների հիմնավորվածության մասին 2012 թվականի հուլիսի 20-ին կազմված թիվ 25 հավաստագրի պատճենը, 2012թվականի նոյեմբերի 24-ին կազմված ակտը, 2011թվականի հունվարի 10-ին և 2012 թվականի հունվարի 10-ին Մարտուն Համբարձումյանի և Անտառամուտի գյուղապետարանի միջև կնքված

տրանսպորտային միջոցների անհատույց օգտագործման պայմանագրերը, Անտառամուտի գյուղապետարանին 180.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 4 անվադող մատակարարելու վերաբերյալ 2012 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 98 հաշիվ ապրանքագրի պատճենը, Անտառամուտի գյուղապետարանից ԱՁ <<Դունախանում Ղուբաթյան>>-ի հաշվեկշռին 180.000 ՀՀ դրամ փոխանցելու վերաբերյալ ԱՇԻԲ Վանաձորի մասնաճյուղի կողմից 2012թ□ հուլիսի 21-ի թիվ 120721002621000 մեմորիալ օրդերի պատճենը, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011թվականի նոյեմբերի 6-ի որոշման պատճենը, որոշվել է թողնել քրեական գործում:

Քանի որ քաղաքացիական հայցի պահանջ չկա, դատարանը այդ հարցը համարել է լուծված: /հ.2 գ-թ 156-158/

16. Ամբաստանյալներ Մարտուն Համբարձումյանը, Զարիկ Գևորգյանը և իրենց պաշտպան Գուրգեն Հարությունյանը 2014թ. սեպտեմբերի 24-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել վերոհիշյալ դատավճռի դեմ: Վերաքննիչ բողոքի կապակցությամբ գրավոր պատասխան Վերաքննիչ դատարան չի ներկայացվել:

17. Քրեական գործի նյութերը Վերաքննիչ դատարանում ստացվել է 2014թ. հոկտեմբերի 3-ին: Վերաքննիչ դատարանի 2014թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել Վերաքննիչ դատարանի դռնբաց դատական նիստում քննության:

<u>Գործի փաստական հանգամանքները.</u>

18. Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Մ. Համբարձումյանը դատապարտվել է հետևյալ արարքը կատարելու համար.

նա աշխատելով որպես Լոռու մարզի Անտառամուտ համայնքի ղեկավար, հանդիսանալով պաշտոնատար անձ, իրեն պատկանող BMW 318i մակնիշի 08 UU 086 հաշվառման համարանիշի ավտոմեքենան անհատույց օգտագործման պայմանագրով 2010թվականի հունվարի 1-ից հանձնել է Անտառամուտ համայնքին և օգտագործել համայնքի կարիքների համար:

2011թվականի հոկտեմբերի 15-ին վթարի ենթարկվելու հետևանքով հիշյալ ավտոմեքենան դարձել է հետագա օգտագործման համար ոչ պիտանի և Մարտուն Համբարձումյանը համայնքի կարիքների համար օգտագործել է փաստացի իրեն պատկանող ВАЗ-21214 մակնիշի 36SO 877 հաշվառման համարանիշի ավտոմեքենան: Եղանակային պայմանների և գյուղի ճանապարհների դժվարանցանելության հետ կապված ВАЗ-21214 մակնիշի ավտոմեքենայի շահագործումն առավել անվտանգ դարձնելու համար Մարտուն Համբարձումյանը 2012թվականի հոկտեմբերի 12-ին համայնքի միջոցներով՝ 180.000 դրամով ԱՁ <<Դունախանում Ղուբաթյան>>-ից գնել և ВАЗ-21214 մակնիշի ավտոմեքենայի վրա տեղադրել է 4 անվադող, որից հետո անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ համայնքի միջոցների նշյալ ծախսը հաշվապահորեն հիմնավորելու նպատակով, 2012թվականի նոյեմբերի 24-ին գյուղապետարանի առաջատար մասնագետ Զարիկ Գևորգյանի հետ Անտառամուտի գյուղապետարանում կազմել է բովանդակությամբ կեղծ պաշտոնական փաստաթուղթ՝ ակտ առ այն, որ ԱՁ<<Դունախանում Ղուբաթյան>>-ից գնված անվադողերը տեղադրվել են իբր BMW 318i մակնիշի 08 UU 086 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա:

Ամբաստանյալ Զ. Գևորգյանը դատապարտվել է հետևյալ արարքը կատարելու համար.

նա օժանդակել է պաշտոնական կեղծիք կատարելուն, այսպես. Անտառամուտ համայնքի ղեկավար Մարտուն Համբարձումյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իրեն պատկանող BMW 318i մակնիշի 08 UU 086 հաշվառման համարանիշի ավտոմեքենան անհատույց օգտագործման պայմանագրով 2010թվականի հունվարի 1-ից հանձնել է Անտառամուտ համայնքին և օգտագործել համայնքի կարիքների համար: 2011թվականի հոկտեմբերի 15-ին վթարի ենթարկվելու հետևանքով հիշյալ ավտոմեքենան դարձել է հետագա օգտագործման համար ոչ պիտանի և Մարտուն Համբարձումյանը համայնքի կարիքների համար օգտագործել է փաստացի իրեն պատկանող ВАЗ-21214 մակնիշի 36 SO 877 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

Եղանակային պայմանների և գյուղի ճանապարհների դժվարանցանելության հետ կապված ВАЗ-21214 մակնիշի ավտոմեքենայի շահագործումն առավել անվտանգ դարձնելու համար Մարտուն Համբարձումյանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին համայնքի միջոցներով՝ 180.000 դրամով ԱՁ <<Դունախանում Ղուբաթյա>>-ից գնել և ВАЗ-21214 մակնիշի ավտոմեքենայի վրա տեղադրել է 4 անվադող, որից հետո անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ համայնքի միջոցների նշյալ ծախսը հաշվապահորեն հիմնավորելու նպատակով, 2012թվականի նոյեմբերի 24-ին գյուղապետարանի առաջատար մասնագետ Զարիկ Գևորգյանի հետ Անտառամուտի գյուղապետարանում կազմել է բովանդակությամբ կեղծ պաշտոնական փաստաթուղթ՝ ակտ առ այն, որ ԱՁ<<Դունախանում Ղուբաթյան>>-ից գնված անվադողերը տեղադրվել են իբր BMW 318i մակնիշի 08 UU 086 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա:

Զարիկ Գևորգյանը 2012թ□ նոյեմբերի 24-ին Անտառամուտի գյուղապետարանում կազմել է նշյալ ակտը, ստորագրել, այնուհետև կեղծել, նմանեցնելով ստորագրել է ավագանու անդամ Քաջիկ Մնացականյանի անվան դիմաց, որից հետո ակտն ստորագրման է ներկայացրել Մարտուն Համբարձումյանին, ով ստորագրելով այն՝ կատարել է պաշտոնական կեղծիք, իսկ Զարիկ Գևորգյանն իր հիշյալ գործողություններով օժանդակել է հանցագործության կատարմանը:

<u>Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

19. Ներկայացված վերաքննիչ բողոքում ամբաստանյալներ՝ Մարտուն Վաչագանի Համբարձումյանը, Զարիկ Արամայիսի Գևորգյանը և իրենց պաշտպան Գուրգեն Հարությունյանը նշել են, որ Առաջին ատյանի դատարանը, դատավճիռ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի հավասարակշռությունը, հետևյալ հիմնավորումներով.

Բողոքաբերները հղում են կատարել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 13-րդ կետերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 6-րդ մասի, <<ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի, համաներման ակտի 18-րդ կետի

պահանջներին, ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներով արտահայտած դիրքորոշումներին:

Բողոքաբերները նշել են, որ քրեական գործը քննվել է դատական քննության արագացված կարգով, իսկ այդ կարգով դատական քննության արդյունքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առավել խիստ պատժի՝ 4 տարի ժամկետով ազատազրկման երկու երրորդը, որը կազմում է 2 տարի 8 ամիս, ուստի Առաջին ատյանի դատարանը իրավունք չուներ ամբաստանյալներին մեղավոր ճանաչեր, նշանակեր պատիժ, այլ պետք է կիրառեր Դատարանի համար պարտադիր՝ նույնանման փաստական հանգամանքներով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով 2011թ□ հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՑ/0013/01/11 և Գագիկ Հայկի Մինասյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ□ մայիսի 31-ի թիվ ԿԴ/0029/01/13 որոշումներում արտահայտած հիմնավորումները և օրենքի մեկնաբանությունները ու ղեկավարվելով «ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝ կարճեր քրեական գործի վարույթը և դադարեցներ քրեական հետապնդումը:

Համաձայն բողոքաբերների Առաջին ատյանի դատարանը, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ խախտելով նյութական և դատավարական իրավունքի նորմեր պարունակող ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 82-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 5-րդ մասի, 375.2-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները, կիրառել է Համաներման ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթները, Մ. Համբարձումյանին և Զ. Գևորգյանին մեղավոր է ճանաչել և նրանց նկատմամբ նշանակել պատիժ: Ընդ որում, այդ պայմաններում լրացուցիչ պատժից ամբաստանյալները չեն ազատվել և ըստ դատարանի վճռի պետք է կրեն այն, որը բացահայտ անբարենպաստ իրավիճակ է ստեղծում նրանց համար: Մինչդեռ՝ Դատարանը պարտավոր էր կիրառեր Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 5-րդ մասով՝ կարճեր քրեական գործի վարույթն ու ամբաստանյալներ Մ. Համբարձումյանի և Զ. Գևորգյանի նկատմամբ դադարեցներ քրեական հետապնդումը:

20. Ելնելով վերոգրյալի և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ, 376-րդ, 394-րդ, 395-րդ, 397-րդ և 398-րդ հոդվածների պահանջներով՝ ամբաստանյալներ Մ□ Համբարձումյանը, Զ□ Գևորգյանը և իրենց պաշտպան Գ□ Հարությունյանը խնդրել են վերաքննիչ բողոքը բավարարել, ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014թ□ օգոստոսի 22-ի դատավճիռը, ամբողջովին կարճել թիվ ԼԴ/0116/01/14 քրեական գործի վարույթը և դադարեցնել ամբաստանյալներ Մ□ Համբարձումյանի ու Զ□ Գևորգյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը:

<u>Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքը՝ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, լսելով վերաքննիչ բողոքում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին պաշտպանի և ամբաստանյալների ելույթները, ինչպես նաև՝ ուսումնասիրելով, վերլուծելով գործի նյութերը, դրանք գնահատելով իրենց համակցությամբ, ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է բավարարել՝

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանել, Համաներման ակտի կիրառմամբ սույն քրեական գործի վարույթը պետք է կարճել և քրեական հետապնդումն ամբաստանյալների նկատմամբ պետք է դադարեցնել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն. *<<1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝/.../*

13/ ընդունվել է համաներման ակտ:/.../>>:

22. Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն.

<<5. Քրեական հետապնդում չհարուցել եւ քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների կամ դատարանների վարույթում գտնվող քրեական գործերը, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով եւ 9-րդ կետով նախատեսված դեպքերի, որոնցով՝/.../

2) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում./.../>>:

Նույն ակտի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

<<13. Սույն որոշման կատարումը վերապահել՝

1) Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի եւ վերաքննիչ քրեական դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարաններում են, սակայն մինչեւ սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել/.../>>:

23. Ինչպես երևում է գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Մ□ Համբարձումյանին և Զ□ Գևորգյանին Համաներման ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ ազատելով նշանակված պատժի կրումից, որոշման հիմքում դրել է հետևյալ պատճառաբանությունները. *<<Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>>ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԱԺՈ-080-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պատժից ազատվում են այն անձիք, որոնց նկատմամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ: Դատարանը, հիմք ընդունելով վերը նշվածը գտնում է, որ Համաներման որոշման կիրառմամբ ամբաստանյալներ Մարտուն Համբարձումյանին և Զարիկ Գևորգյանին պետք է ազատել միայն նշանակված հիմնական պատժից, քանի որ Համաներման որոշման 10-րդ կետի համաձայն՝ Համաներման որոշումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից:>>:*

24. ՀՀ վճռաբեկ դատարանը Վարուժան Գագիկի Ավետիսյանի վերաբերյալ թիվ ՍԴ3/0013/01/11 քրեական գործով 2011թ□ հոկտեմբերի 20-ի կայացված որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<</.../Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման

ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն/.../>>: /տե՛ս Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 16-րդ կետը/:

Գ. Մինասյանի վերաբերյալ թիվ ԿԴ/0029/01/13 քրեական գործով 2014 թվականի մայիսի 31-ի կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<<.../Համաներման ակտի 18-րդ կետն անհրաժեշտ է մեկնաբանել տառացի՝ անվերապահորեն պահպանելով դրանում նախատեսված կանոնն այն մասին, որ անձի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը, ի թիվս այլ պայմանների, հնարավոր է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-ին հոդվածի համաձայն՝

<<.../ դատական քննության արագացված կարգը գործող օրենսդրական կարգավորման պայմաններում կիրառվում է օրենսդրորեն սահմանված և դատական պրակտիկայում մշակված հստակ պայմանների առկայության պարագայում: Այդ պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարական այս կառուցակարգի նախադրյալներից մեկը համապատասխան սուբյեկտների (դատախազ, տուժող) կամարտահայտություն է: Բացի այդ, դատական քննության արագացված կարգի կիրառումը կախված է դրա համար անհրաժեշտ պայմանների առկայության մասին դատարանի տված իրավական գնահատականից, և ըստ այդմ, առանձին պայմանների գնահատման հարցում ենթադրում է որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն (խոսքը, մասնավորապես, վերաբերում է դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը հարկադրաբար ներկայացնելու կամ միջնորդության բնույթն ու հետևանքները չգիտակցելու պայմաններին): Նշված հայեցողությունը, սակայն, բացարձակ բնույթ չի կրում, և դրա հնարավոր դրսևորման շրջանակները հստակ կանխորոշված են օրենքով (օրինակ՝ դատարանը մերժում է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդությունը, երբ առկա են հիմնավոր կասկածներ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ, կամ ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց և այլն): Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգի կիրառման, ինչպես նաև համապատասխան միջնորդության մերժման հիմքերն ու պայմանները հստակ սահմանված են օրենքով, և դրանց առկայության կամ բացակայության իրավական գնահատականը կախված չէ դատարանի սուբյեկտիվ դատողություններից: Փաստորեն, համապատասխան պայմանների առկայության պարագայում դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումն օրենսդրի պարտադիր պահանջն է, իսկ դատավարական այս մեխանիզմի գործադրման անխուսափելի արդյունքը մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում այնպիսի պատիժ նշանակելն է, որը չի կարող գերազանցել անձին մեղսագրվող հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, կամ եթե այն փոքր է տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պատժից, ապա՝ առավել մեղմ պատիժը:

Հիմք ընդունելով սույն որոշման 16-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառելիության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել, թե առկա չէ արդյոք արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք, որը ենթակա է կիրառման նախքան Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառումը: Անձի վիճակն այլ կերպ բարելավող է այն օրենքը, որը քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը: Այլ խոսքով՝ արագացված դատական քննության արդյունքում անձի նկատմամբ նշանակվող պատժի առավելագույն ժամկետը ավելի մեղմ է, քան ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում նշանակվող պատիժը, ինչը նշանակում է, որ արագացված դատական քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնները, ի համեմատ ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնների, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք: /.../

Մինչդեռ Համաներման ակտի 18-րդ կետն անհրաժեշտ է մեկնաբանել տարացի (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի վերնագրից, այնպես էլ այդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմից ակնհայտ է, որ այն վերաբերում է քրեական օրենքի հետադարձության խնդրին: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց (...) վրա (...)»: Մինչդեռ, Համաներման ակտի վերոհիշյալ կետը սահմանում է միայն, որ Համաներման ակտը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո: Այսինքն՝ Համաներման ակտի 18-րդ կետում, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի վերը հիշատակած 13-րդ հոդվածի 1-ին մասի, չկա որևէ մատնանշում նոր ընդունված կամ փոփոխված օրենքը համապատասխան արարք կատարած անձանց վրա տարածելու կանոնի մասին: Բացի այդ, հետադարձ ուժի կանոնն արդեն իսկ կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքում, կրում է համապարտադիր բնույթ, և այդ կանոնը գործելու է անկախ Համաներման ակտում նախատեսված լինելու հանգամանքից: Այսինքն՝ Համաներման ակտի 18-րդ կետը ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի վերարտադրությունը չէ: Եվ վերոնշյալ նորմերի համեմատական վերլուծությունից բխում է, որ Համաներման ակտում խոսքը ոչ թե բացառապես նոր ընդունված կամ փոփոխված, այլև հանցանք կատարած անձի վիճակը բարելավող նաև գործող օրենքը կիրառելու մասին է: Իսկ դատական քննության արագացված կարգի դատավարական ինստիտուտը, մասնավորապես այս դեպքում պատժի նշանակման առանձնահատկությունները կանոնակարգող նորմերը միանշանակ բարելավում են

անձի վիճակը, քանի որ դրանց կիրառման արդյունքում էապես կրճատվում է անձի կատարած համապատասխան արարքի համար նախատեսված պատժաչափը>>: /տե՛ս Գագիկ Հայկի Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԿԴ/0029/01/13 որոշումը/:

25. Վերաքննիչ դատարանը, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը հիշատակված նախադեպային որոշումների մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն, գնահատելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված նորմը պետք է դիտարկել որպես անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք՝ Համաներման ակտի 18-րդ կետի հիմքով, հետևաբար՝ ամբաստանյալներ Մ. Համբարձումյանի և Զ. Գևորգյանի նկատմամբ պետք է կիրառել Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետը, այլ ոչ թե Համաներման ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը կետը, իսկ 9-րդ կետով վերջիններիս նկատմամբ համաներում չկիրառելու հիմքեր չկան:

26. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝/.../ *առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում:*

Համաձայն նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի */.../ գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.*

27. Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. օգոստոսի 22-ի դատավճիռն՝ ըստ մեղադրանքի՝ Մարտուն Վաչագանի Համբարձումյանի ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և Զարիկ Արամայիսի Գևորգյանի ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է բեկանել և Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հիման վրա վերջիններիս նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել՝ դադարեցնելով վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումը:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 393-395-րդ, 402-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը Մարտուն Վաչագանի Համբարձումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և Զարիկ Արամայիսի Գևորգյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և <<ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ Ազգային Ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Մարտուն Համբարձումյանի և Զարիկ Գևորգյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0116/01/14 քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել:

Մարտուն Համբարձումյանի և Զարիկ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

Իրեղեն ապացույց ճանաչված՝ 2014 թվականի նոյեմբերի 24-ի ակտը, Անտառամուտի գյուղապետարանի և ԱՁ <<Դունախանում Ղուբաթյան>>-ի միջև 2012 թվականի հուլիսի 10-ին կնքված թիվ 1 պայմանագիրը, դրա հիման վրա կնքված թիվ 65 հաշիվ ապրանքագրի 2-րդ օրինակը, պահանջվող վճարումների հիմնավորվածության մասին 2012 թվականի հուլիսի 20-ին կազմված թիվ 25 հավաստագրի պատճենը, 2012 թվականի նոյեմբերի 24-ին կազմված ակտը, 2011 թվականի հունվարի 10-ին և 2012 թվականի հունվարի 10-ին Մարտուն Համբարձումյանի և Անտառամուտ գյուղապետարանի միջև կնքված տրանսպորտային միջոցների անհատույց օգտագործման պայմանագրերը, Անտառամուտի գյուղապետարանին 180.000 դրամ ընդհանուր արժողության 4 անվադող մատակարարելու վերաբերյալ 2012 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 98 հաշիվ ապրանքագրի պատճենը, Անտառամուտի գյուղապետարանից ԱՁ <<Դունախանում Ղուբաթյան>> հաշվեկշռին 180.000 դրամ փոխանցելու վերաբերյալ ԱՇԻԲ Վանաձորի մասնաճյուղի կողմից 2012 թվականի հուլիսի 21-ի թիվ 120721002621000 մեմորիալ օրդերի պատճենը, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի նոյեմբերի 6-ի որոշման պատճենը, թողնել քրեական գործում:

3. Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ
Իսկականի հետ ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: